



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՊՈՐՏԻ ԵՎ
ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹՅԱՆ ՀԱՐՅԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՆԱԽԱՐԱՐ

Հ Ր Ա Մ Ա Ն

21 Մայիս 2018 թ. № 173 - Ա/1
ք. Երևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ «ՏԱՐՎԱ 10 ԼԱՎԱԳՈՒՅՆ ՄԱՐԶԻԿՆԵՐ»
ՄՐՑՈՒՅԹԻ ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆԸ ՄԱՍՆԱԿՑԵԼՈՒ ՀԱՄԱՐ ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՊՈՐՏԻ ԵՎ ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹՅԱՆ ՀԱՐՅԵՐԻ
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԼՐԱՏՎԱՄԻՋՈՅՆԵՐԻ ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ ԿԱՐԳԸ
ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՊՈՐՏԻ ԵՎ
ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹՅԱՆ ՀԱՐՅԵՐԻ ՆԱԽԱՐԱՐԻ 2017 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 31-Ի
№ 199-Ա/1 ՀՐԱՄԱՆՆ ՈՒԺԸ ԿՈՐՅՐԱԾ ՃԱՆԱԶԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Կառավարության կառուցվածքի և գործունեության մասին»
Հայաստանի Հանրապետության օրենքի 9-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի,
«Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 36-րդ
հոդվածի 1-ին մասի 1-ին կետի ու 5-րդ մասի և Հայաստանի Հանրապետության
վարչապետի 2018 թվականի հունիսի 11-ի № 701-Լ որոշման հավելվածի 18-րդ կետի 20-
րդ ենթակետի՝ հրամայում եմ՝

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության «Տարվա 10 լավագույն
մարզիկներ» մրցույթի քվեարկությանը մասնակցելու համար Հայաստանի
Հանրապետության սպորտի և երիտասարդության հարցերի նախարարությունում
լրատվամիջոցների հավատարմագրման կարգը՝ համաձայն հավելվածի:

2. Ուժը կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության սպորտի և
երիտասարդության հարցերի նախարարի 2017 թվականի հոկտեմբերի 31-ի
«Հայաստանի Հանրապետության «Տարվա 10 լավագույն մարզիկներ» մրցույթի
քվեարկությանը մասնակցելու համար Հայաստանի Հանրապետության սպորտի և
երիտասարդության հարցերի նախարարությունում մարզական լրագրողների
հավատարմագրման կարգը հաստատելու մասին» № 199-Ա/1 հրամանը:

3. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ՝



Գ. ՂԱԶԱՐՅԱՆ

Կ Ա Ր Գ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ «ՏԱՐՎԱ 10 ԼԱՎԱԳՈՒՅՆ ՄԱՐԶԻԿՆԵՐ» ՄՐՑՈՒՅԹԻ ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆԸ ՄԱՍՆԱԿՑԵԼՈՒ ՀԱՄԱՐ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՊՈՐՏԻ ԵՎ ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԼՐԱՏՎԱՄԻՋՈՑՆԵՐԻ ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ

1. Սույն կարգով սահմանվում են Հայաստանի Հանրապետության «Տարվա 10 լավագույն մարզիկներ» մրցույթի քվեարկությանը մասնակցելու համար Հայաստանի Հանրապետության սպորտի և երիտասարդության հարցերի նախարարությունում (այսուհետ՝ Նախարարություն) մարզական խմբագրություն (լրագրողներ) ունեցող լրատվամիջոցների հավատարմագրման կանոնները:

2. Լրատվամիջոցների հավատարմագրումն իրականացվում է սույն կարգին համապատասխան՝ յուրաքանչյուր տարի նոյեմբեր ամսին՝ Հայաստանի Հանրապետության «Տարվա 10 լավագույն մարզիկներ» տվյալ տարվա մրցույթի քվեարկությանը մասնակցելու համար: Հավատարմագրման ժամկետն է՝ հավատարմագրման օրվանից մինչև մրցույթի քվեարկության համար սահմանված ժամանակահատվածի վերջին օրը՝ քվեարկության ավարտը:

3. Հայաստանի Հանրապետության «Տարվա 10 լավագույն մարզիկներ» մրցույթի քվեարկության համար կարող են հավատարմագրվել այն լրատվամիջոցները (հեռուստաընկերություն, տպագիր մամուլ, էլեկտրոնային զանգվածային լրատվամիջոց), որոնք՝

1) հայկական սպորտը լուսաբանող առնվազն շաբաթական պարբերականությամբ վերլուծական ծրագիր/հաղորդում ունեցող, լրերի բլոկում հայկական սպորտը լուսաբանող առանձին ծրագիր ունեցող հեռուստաընկերություն են,

2) հայկական սպորտը լուսաբանող առնվազն 3000 տպաքանակով տպագիր լրատվամիջոց են,

3) հայկական սպորտը լուսաբանող էլեկտրոնային լրատվամիջոց են:

4. Հավատարմագրվելու համար լրատվամիջոցները պետք է մինչև տվյալ տարվա նոյեմբերի 30-ը համապատասխան դիմում ներկայացնեն Նախարարություն՝ Նախարարության տեղեկատվության և հասարակայնության հետ կապերի բաժին՝ հաստատված լրատվամիջոցի ղեկավարի կողմից՝ նշելով իրենց լրատվամիջոցի բոլոր

լրագրողների կարծիքը ներկայացնող լրագրողի ըստ անձնագրի ազգանունը, անունը հայրանունը (եթե հայրանունը նշված է անձնագրում) և բնակության հասցեն, լրատվական գործունեություն իրականացնողի էլեկտրոնային հասցեն և հեռախոսահամարը:

5. Հայաստանի Հանրապետության «Տարվա 10 լավագույն մարզիկներ» տվյալ տարվա մրցույթի քվեարկությանը մասնակցելու համար լրատվամիջոցների հավատարմագրման համար վարվում է առանձին հավատարմագրման մատյան:

6. Նախարարությունը սույն կարգի 4-րդ կետում նշված դիմումն ստանալուց հետո այն անմիջապես գրանցում է հավատարմագրման մատյանում, որտեղ նշվում են դրա ստացման օրը և սույն կարգի 4-րդ կետով նախատեսված՝ դիմումում մատնանշված տեղեկությունները: 5-օրյա ժամկետում լրատվամիջոցին հավատարմագրելու կամ նրա հավատարմագրումը մերժելու մասին գրառում է կատարում լրատվամիջոցների հավատարմագրման մատյանում, և դրա մասին տեղեկացվում է լրատվամիջոցը: Հավատարմագրման մատյանում նշվում են նաև հավատարմագրման վերջնաժամկետը, հավատարմագրման դադարեցման մասին նշումը, հավատարմագրման դադարեցման հիմնավորումը (համառոտ) և այլ տեղեկություններ:

7. Լրատվամիջոցի հավատարմագրումը մերժվում է, եթե սույն կարգի 4-րդ կետում նշված դիմումը չի բովանդակում կարգով սահմանված տեղեկությունները, կամ առկա է լրատվամիջոցի հավատարմագրումը դադարեցնելու՝ սույն կարգի 11-րդ կետում նշված հիմքերից որևէ մեկը:

8. Հավատարմագրված լրատվամիջոցների լրագրողների ցուցակը հանձնվում է Նախարարության անցագրային կետ(եր): Ցուցակում փոփոխությունները և լրացումները կատարվում են լրատվամիջոցների հավատարմագրման մատյանում կատարված գրառումներին համապատասխան՝ այդ գրառումները կատարվելուց անմիջապես հետո:

9. Հավատարմագրված լրատվամիջոցների գործունեությունը կանոնակարգվում է Հայաստանի Հանրապետության սպորտի և երիտասարդության հարցերի նախարարի 2017 թվականի հուլիսի 17-ի «Հայաստանի Հանրապետության «Տարվա 10 լավագույն մարզիկներ» մրցույթի կազմակերպման և անցկացման կանոնակարգը և Հայաստանի Հանրապետության «Տարվա 10 լավագույն մարզիկներ» մրցույթին մասնակցելու համար Հայաստանի Հանրապետության տարվա 20 լավագույն թեկնածու մարզիկների որոշման չափորոշիչների սանդղակը հաստատելու մասին» N° 143-Ա/1 հրամանով հաստատված (հավելված N° 1) Հայաստանի Հանրապետության «Տարվա 10 լավագույն մարզիկներ» մրցույթի կազմակերպման և անցկացման կանոնակարգով:

10. Հավատարմագրված բոլոր լրատվամիջոցները տեղեկացվում են Հայաստանի Հանրապետության «Տարվա 10 լավագույն մարզիկներ» մրցույթի քվեարկության ժամանակահատվածի և կոնկրետ իրենց քվեարկության օրվա և ժամի մասին Տեղեկատվությունը լրատվամիջոցին փոխանցելու պատշաճ ձև է համարվում